անուն։ Արդեն հարաշխարհությամբ թէ ոչ,— այդ կախված է ընկերության վարչության վճռից։

Որովհետև դումարները փոխ կը տրվին փոքր պրոցէնտներով և որովհետև շահերը, բացի մեր վերև յիշված տոկոսներից, ամբողջությամբ կը նուիրվին արդիւնաբերող օգտին,— շատ բնական է, որ բոլոր թէ մեծ արդիւնաբերողները (կալվածատէրերը) թէ փոքրերը (շինականները) կը յանձնեն իրանց մթերքի ծախելը ընկերությանը։

Առնողները, իրանց կողմից, կը դիմեն ընկերությանը նրա համար, որ միջոց կուտեն ընկերությունից աւելի էժան առնել, քան թէ չարչիներից։

Շինականները, կազմելով ընկերակցությունները և յանձնելով ընկերությանը գիւղական արդիւնքների ծախելը,—իրանց կողմից կրկին կը սատանան։

Չենք կամենում մանրամասնաբար նկարագրել ընկերության կազմակերպությունը, որովհետև փորձը ցոյց կը տայ ինչ ընդարձակություն նա կը առնայ, կաւելացնենք միայն որ այդ տեսակ ընկերությունը կիրագործի անմիջական յարաբերությունը գիւղի և քաղաքի մէջ և ունենով արդիւնագիտական բնաւորություն,—անկասկած մեծ օգուտներ կը բերէ երկրին։

Ս. Խոջայանց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Թիֆլիսի քաղաքային վարչությունից ընտրված հարցերից միսը՝ առևտրական դատարանի ընդդիմն էր։

Մեր ընթերցողներին յայտնի էր արդէն մեր կարծիքը առևտրական դատարանի անհրաժեշտության վրա, ուստի աւելորդ ենք համարում նորից վերստին բերել նրա հարկաւորությունը ապացուցանելու համար։ Մեզ պիտի հետաքրքրի այժմ թէ ինչ կազմակերպություն պիտի ունենայ յիշեալ հիմնարկությունը, արդեօք համապատասխան կը լինի նա մեր գաղափարին և կը հասնի նա իր նշանակությանը։

Յիշենք այդտեղ այն հիմնական սկիզբը որ մենք համարեցինք մեր յօդվածների համար առաջնորդող դարձարար և որ գլխաւոր շարժառիթ էր քաղաքային վարչության մէջ արած առաջարկությանն էլ։ Ընդհանուր դատարանները մի կողմից իրանց դանդաղ դործանության պատճառով չեն լցուցանում առևտրական գործերի քննության պահանջներին, միւս կողմից իրաւարանները առհասարակ և մեր իրաւարանները մասնաւորապէս ծանօթ չը լինելով թէ առևտրական իրաւունքի, թէ վաճառական դասի կեանքի, աւանդությունների, սովորությունների և գործնական ձևերի հետ, անկարող են լինում դատել և վճռել վաճառական դասի մէջ ծագած առևտրական գործերին վերաբերեալ տարաձայնությունները։

Այդ է պատճառ, որ դատաւորների մի մասը պիտի լինեն առևտրական դասի ներկայացուցիչները։ Առևտրական դատարանի կազմակերպությունը պիտի բաղկանայ մասամբ իրաւարաններից, մասամբ վաճառականներից, որոնցից առաջինները պիտի վճռեն պրոցէսների օրինական կողմը, իսկ միւսները նրանց իրական կողմը։

Այդ հարցությունը ինչպէս լսում ենք, հասաւ և քաղաքային վարչության ընդհանուր ժողովը։

Մենք չենք կարող չը յայտնել մեր կատարեալ հաճակրությունն այդ տեսակ մտքին։ Այց նոյն իսկ այն պատճառով, որ ընդհանուր ժողովը բաժանում է այդ համոզմունքը, մեզ զարմանալի է թվում որ այդ գաղափարը իրագործելու դիտաւորության մէջ, նա ընկնում է անելանելի հակասության մէջ։ Իրաւարանները ասում են՝ մենք տեղեակ չենք առևտրական իրաւունքին, առևտրական գործերին, սովորություններին, տեղական վաճառականության աւանդություններին,—այլ կարող ենք հիմնվող դատարանի մէջ միայն ընդհանուր ուղղություն տալ և վճռել առևտրական գործերի մէջ ընդհանուր օրինական կողմը. . . բայց այնու ամենայնիւ կամենում են, որ առևտրական դասից ընտրվելու երեք ներկայացուցիչները, որք դատաւորի պաշտօն պիտի վարեն՝ անվարձ ծառայեն երկու տարի, իսկ իրաւարաններից նշանակվելու նախագահը պիտի ստանայ 4000 ռուբլի, նրա օգնականը 3000 ռուբլի, քարտուղարը և այլ պաշտօնակատարները իրաւարաններից ամենքը ռոճիկ պիտի ստանան. . .։ Արդէս շարժառիթ այդ տեսակ առաջարկության բերում են այն իրողությունը որ վարձ տալով վաճառականներին, անպատճառ կընտրվին գործերից հրաժարված, գուցէ սնանկացած անձինքը, որք չեն էլ կարողանայ հետևել առուտրի ժամանակակից ընթացքին և ուրեմն նրա հետ անմիջական յարաբերություն ունենալ։ Երկրորդ պատճառը այն է, որ այդ տեսակ դէպքում գլխաւոր դեր կը խաղան ազգականությունները, հովանաւորությունն և այլն։

Մենք չը գիտենք թէ ինչ հիման վրա մենք պիտի այդ տեսակ վատ կարծիք ունենանք ընտրողների վրա։ Իսկ եթէ օրինական ընտրությունը կախված լինի քաղաքային վարչության ընդհանուր ժողովից, և այդ տեսակ դէպքերը պատահելու են այն անձինքների վերաբերմամբ, որք ընտրվելու են առևտրական դատարանի համար որպէս առևտրական դասի ներկայացուցիչներ, մենք չենք հասկանում թէ ինչի նոյն ազգականության ու հովանաւորության յարաբերությունից ծագած կողմնապահությունը չը պիտի պատահենք ընտրողների մէջ և այն անձինքների վերաբերությամբ որք պիտի ընտրվին իրաւարաններից...

Որքան մեզ յայտնի է եւրոպական առևտրական դատարաններում դատաւորները առևտրական դասից անվարձ չեն ծառայում։ Եթէ ընդհանուր դատարաններում էկսպերտները անգամ, որք կանչվելով մի գործի, կոչցնում են երկու երեք ժամ, դարձեալ վարձատրվում են,—ինչի վաճառականը դատաւորի պաշտօնը երկու տարի շարունակ վարելով, պիտի զոհի անվարձ իր ժամանակը ու աշխատությունը ու յետ ընկնի իր գործերից։ Ուրեմն հարկաւոր կը լինի անպատճառ ընտրել հարուստ, ապահովացած վաճառականներից, որք պատուի համար կը համաձայնեն առևտրական դատարանի մէջ դատաւորի կամ անդամ անուն կրելու, բայց իսկապէս երբէք կամ շատ սակաւ ներկայ կը գտնվին դատարանի մէջ. կամ անփոյթ կը վարեն իրանց պաշտօնը, իսկ բոլոր գործակատարությունը դարձեալ կը մնայ իրաւարանների ձեռքում։ *)

Իսկ այդ տեսակ կէս տալով հարցին, հարկաւոր էլ չէր յարուցանել առևտրական դատարանի ու նրա մէջ առևտրական տարրի ներկայացության անհրաժեշտության խնդիրը։

Վերջացնում ենք մեր խօսքը աւելացնելով, որ մենք բացի սորանից յոյս ունենք որ յիշեալ հիմնարկությունն դատաստանական գործնական ծակատարության ձևը կը լինի ոչ թէ բընդհանրական (սպէցիալիտէտների կամ ինկվիզիցիոնների) այլ մրցողական (սօստիազատէլների)։

Առաջին ձևը տալիս է դատաւորներին ներքոծական իրաւունքները, այսինքն նրանց վրա է պարտաւորությունը հաւաքել փաստերը, հետազօտել, դատաւորել, քննել և լծիւ տալ,—սա հին դատաստանների ձև է։ Երկրորդ ձևը ճանաչելով դատաւորներին համեմատաբար կրաւորական իրաւունքները, թոյլ է տալիս կողմերին հաւաքել փաստերը, նրանց հետազօտել, դատաւորել և ներկայացնել։ Դատաստանը վճիռ է տալիս ներկայացրած փաստերի վրա հիմնվելով։

Եթէ առաջին, հին ձևը տիրապետող կը լինի հիմնվող առևտրական դատարանի մէջ, նա նոյն կը լինի ինչ որ էր մեր Թիֆլիսի հանգուցեալ առևտրական դատարանը։ Իսկ եթէ մեր հին առևտրական դատարանը յարգություն պիտի ստանէ,— մենք չենք կարծում թէ մի որ և է օգուտ պիտի բերի մեր հասարակությանը ու առևտրական դասին։

ԿՈՎԿԱՍՈՒ ՄԵՂՈՒԱԲՈՒԽՈՒԹԻՒՆԸ

Երբ մեր ուշադրությունը դարձնում ենք բնության ամէն հարստությունների լի Կովկասի վերայ, երբ նայում ենք նորա անթառամելի ծաղիկներով զարդարած սարերին, ձորերին, դաշտերին և հովիտներին, նորա բարեխառն կլիմային,—խոկոյն ծնվում է մեր մէջ այն միտքը, թէ այդ երկիրը, բացի նորանից, որ ունի երկրագործության ամէն յարմարությունը, այլ և նա շատ ընդունակ է մեղուաբուծության համար։ Ատածիս ապացոյց կարող է լինել այն, որ մեր գիւղացիքը շատ անգամ գտնում են սարերումը, ժայռերի պատառուածքումը, անտառումը՝ ծառերի ճեղքերի մէջ, վայրենի մեղրաճանճերից դրած մինչև 3—4 փութ մեղր։ Երբեմն պատահում է գտնել այդ քաղցր կերակուրը ճանճերից դրած այնպիսի մի տեղում, որ իւր բարձրության համար բոլորովին անմերձենալի է լինում։ Աշխատասէր մեղրաճանճերը, ժայռերի ճեղքերումը ընդարձակ տեղ չունենալով, իւրանց խորիսկը (մեղրի հացը) դարսում են նորա դրսումը։ Գիւղացիքը, հեռուից տեսնելով լուսնի նման փայլուն մեղրահացերը, աշխատում են հրացանով կամ այլ հնարներով վեր ածել մեղրը, որը շատ անգամ չէ յաջողվում նորանց։ Արևի տաքությունից հալուելով մեղրը շատ անգամ ծորումէ դէպի ցած։ Գիւղացի երեխայքը, գտանելով այդպիսի տեղեր, դնում են այն քաղցր ծորի (կաթիլների) տակ մի աման կամ տախտակ և սկսում են ախորժանքը լիցնել նորան։

Ասածներից հետևում է այն, թէ որքան կը յաջողուէր մեղուաբուծությունը Կովկասում, եթէ գիւղատնտեսական օրինաւոր կանոններովը խնամանցի նպատակը այն լինելով, որ չատացնէ այդ խումբը, առաջարկում է կրօնավոր ժողովուրդին, թէ կարող են ազգական ազգականից կին վեր առնել։ Այս բանը որ անսովոր էր Հայերի մէջ, շատ զմայլեցուցիչ է թւում ամենին, և ոչ ոք չէ կամենում կատարել Ս. Համբարձումեանցի առաջարկությունը, բացի Թառառովներից, որոնք մեծ ազգ էին, շատ հասած աղջկերանց և տղաների տէր։ Դրանք ընդունում են այդ առաջարկությունը, մտածելով՝ որ սա իրանց շատ օգուտ կը բերէ։ Այս միջոցին Թիֆլիզից գալիս է լուտերական Փաստոր Լեղիտովը, սրան առաջարկում են Թառառովները, որ կատարէ սրանց խորհուրդը, այսինքն ազգականի հետ ամուսնանալը, որ չի հաս է,—հաս անէ։ Բայց տեղեկանալով Փաստոր Լեղիտովը բանի հանգամանքին, որ բացի Թառառովներից, և Ս. Համբարձումովից՝ ուրիշները միտք չունին այս բանի համար, այս ընդէմ ազգի սովորություններին պատկման խորհուրդը՝ Փաստոր Լեղիտովը սկսում է անկարելի համարել, տեսնելով, որ մանաւանդ իրանց ժողովուրդի մէջ անհամաձայնություն կայ այդ մասին։ Բայց Թառառովները, տեսնելով բանի հանգամանքը, շատ են աշխատում դորա մասին վերջապէս բանը գլուխ է գալիս...:

Այս միջոցին երեք անձինք են պատկվում, Զրհանկիր և Գէորգ Թառառովները, որ հարազատ հօր եղբօր աղջիկներանց հետ, Բայց եւրորդ անձը լինում է Աւագ Անառովը, սա էլ իրա հարազատ մօրաքուր աղջկայ հետ է պատկվում։ Այդ խզեի ընդդէմ պատկները, ոչ թէ օգուտ բերին պատկվողներին, այլ ընդհակառակն վնաս։ Կարծես թէ, ճշմարիտ լինի գրած երևելի կոմը, որ ազգականի հետ ամուսնանալը, բացի խղճմտանքին ընդդէմ լինելից, վնաս կը բերէ ամուսնացողներին։

Դրանից յետոյ Թառառովները առաջարկում են մի ուրիշ խորհուրդ, այսինքն «եթէ դուք ձեր կանանց ոսկիները, կամ արծաթի զարդարանքները ծախէք և տաք մեզ, մենք էլ օգուտ ձեզ առուտուր կանենք. այդ մեծ շահ կբերի ձեզ. իզուր է կանանց զարդարանք ունենալը»։ Այդ քարոզը մեծ տպաւորություն է անում շատերի վերա, դրանք էլ գնում են իրանց տները և առնում են կամայ ակամայ իրանց կանանց ոսկիները, կամ արծաթները և տալիս են Թառառովներին. այս դումարն հասնում է մինչև 15,000 բուբլի։ Երբ մի քանի տարի անցնում է, պահանջվում է, որ Թառառովները հաշիւ տան Շամախոյ լուտերազաւան անձանց, որոնք տուել են իրանց կանանց ոսկիները և արծաթները, կարծելով թէ, արդէն մեծ շահ բերած կլինեն այդ փողերը։ Հաւաքվում են միասին, հաշիւ են տեսնում, այն ժամանակ երևում է, որ, ոչ թէ օգուտ չկայ, այլ մայր դումարի կէսն էլ չկայ։ Վերջապէս հազիւ թէ կարողանում են 1 բուբլի տեղակ, 30 կոպէկ յետ ստանալ...։ Արդեօք ինչ եղաւ այդ փողերը, որ մի երևելի վնաս չեն արել այդ պարոնները. . .։ Այսպէս կոչում է խեղճ կանանց ոսկի կամ արծաթը, որ շատերը աչքը արտասուքով են տուել։ 1868 թուին գալիս է Մոսկվայից Նուխեցի Փաստոր Իսրայել Դոլուխանեանցը Շամախոյ լուտերականներին հովանալու, որը հովվում է մինչև 1872 թիւ յունվարի 16-ն։ Այդ օրը լինում է մի շատ սաստիկ երկրաշարժ, որը յայտնի է աշխարհքին թէ ինչ վնաս հասցրեց Շամախուն։ Այդ ժամանակ Դոլուխանեանցն գնացած է լինում մի քանի օրով Նուխի, երբ որ հեռագիր է ստանում այդ դառն անցքի համար, իսկոյն գալիս է Շամախի, տեսնում է, որ Հայ լուտերականների ժողովարանն էլ, որ պարոն Լալայովանց տներն էին, քանդվել է և բաւական հոգիներ է սպանել. ցաւում է սիրտը այդ բանի համար, և գրում է շատ քաղաքներ, որ ամէն լուտերական եկեղեցիներից օգնություն գայ. որ շատ բաժանվի վնասվածներին, Վերջապէս այս տեղից այն տեղից գալիս է մինչև 17,000 բուբլի օգնություն միայն Շամախոյ Հայ լուտերականներից նրանց համար, որ վնասված են։ Բայց լուտերականների գլխաւոր հոգաբարձուք. տեսնելով դումարի շատությունը, չեն կամենում բաժանել այն անձանց, որոնք վնասված էին երկրաշարժով և վերջին աղքատության մէջ էին ընկել։ Հոգաբարձուք խորհուրդ են տալիս Փաստոր Դոլուխանեանցին, որ այս դումարն չի բաժանեն, այլ պահեն առ ժամանակ իրանց մօտ։ Դոլուխանեանցն, կարծելով, որ սրանք առ ժամանակ ոչ ասելով, կարելի է մի աւելի յարմար բարի խորհուրդ ունեն, համաձայնում է։ Երբոր մի քանի ամիս անցնում է, կրկին Փաստոր Դոլուխանեանցը առաջարկում է հոգաբարձուից, որ այն դումարն պիտի անպատճառ բաժանվի։ Բայց հոգաբարձուք չեն կամենում բաժանել։ Դոլուխանեանցի բոլոր աշխատանքը ի դուր է անցնում, և վերջապէս նա միշտ սրա նման և շատ պակասություններ տեսնելով սրանց մէջ, թողում է Շամախոյ լուտերականներին և գնում է Մոսկով, որը կարծեմ էլ չի ուզում յետ դառնալ, ինչպէս կարդացինք այս տարի Մեզուի 9 համարում։ Նորա գնալուց յետոյ Լուտերազաւան հայ ժողովուրդը մնում է անտէր, սրանք այժմ սկսում են միմեանց հետ վիճել յիշեալ գումարի վերա, բայց հոգաբարձուք դարձեալ չեն կամենում վնասվողներին օգնություն անել։ Ցնծելով սրանց ծուռ հոգաբարձությունը մանաւանդ և սրանց ագահությունը և Աստուծոյ և մարդկանց կամքի հակառակ գործերը, սկսում են քանի մի անձինք կրկին վերադարձնել իրանց մայրենի եկեղեցին, որ գտնէ իրանց սիրտը մի խաղաղություն գտնի։ Ինչպէս երևում է հոգաբարձուք այն 17,000 բուբլի օգնությունը իրանց մէջ բաժին բաժին արած են։ Հոգաբարձուները սրանք են՝ Դ. Թ. . .վը, Ա. Հ. . .վը և Հ. Ա. . .վը։ Մերոնցից շատերը նեղացած են այժմ և խօսում են այս մասին. որովհետև յիշեալ հոգաբարձուք այդ գումարից ոմանք իրանց առուտուրի մէջ են մտցրել. ոմանք էլ վիկրիչնի բիլեթներ են առել։ Կարծեմ, այսպիսի խղճմտանքի հակառակ գործեր շատ քիչ գտնուին, և ինչպէս երևում է, եթէ բանը այսպէս գնայ, պէտք է երկար չը քաշի այդ ժողովքը։ Բայց ես ինչպէս ասացի, թէ ընդունված եմ լուտերականության մէջ, այն էլ ոչ թէ մի բան հասկանալով՝ ոչ իմ մայրենի լուսաւորչական և ոչ այդ լուտերական եկեղեցու օրէնքից, ոչ մէկի լաւության և ոչ միւսի վատության մասին, այլ իմ ծնողներիս համոզելովը, որ չէր կարելի ես անչափահաս լինելով հակառակվէի ծնողաց կամքին։ Բայց այժմ համեմատելով երկուսն էլ, տեսնում եմ, որ հակառակության բան է. էլ ուրիշ ոչինչ։ Մի կողմից էլ տեսնելով այժմ իմ մայրենի եկեղեցու ազատությունը. իմ սէրս փոխվում է կրկին դէպի նա, որ զրկվել էի իմ ծնողներիս պատճառաւ այն տուրը եկեղեցուց։ Ինչպէս հայ ծնունդ եմ, էլի սիրում եմ հայ մնալ։

1873. Շամախի Հ. Ա.

---

*) Մենք կառաջարկենք ընդհանուր ժողովին իր մտքերի մէջ մինչև վերջը յաջողդաբար դատելու համար, որ ընտրվին վաճառականներից ; ատհարուստ մարդիկ, որք երբ ներկայ չը գտնվին դատաստանին, կարողանան տուղանք էլ վճարել։ Աւելի դուցէ կը լինէր և նիւթական աղրիւր հիմնարկության համար, որի միջոցները, ինչպէս տեսնում ենք առաջարկությունից, շատ սուղ են և պիտի ստացվին միայն քաղաքի առևտրական դասի հարկերը մեծացնելուց...